



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 04-Ն

11.04.2015թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի 2015թ. վարչական բյուջեի եկամտային մասում «Պետական բյուջեից տրամադրվող այլ ընթացիկ դոտացիա» տողի եկամտի պլանը սահմանել 177.4 հազ. դրամ:

2015թ.-ի վարչական բյուջեի ընդամենը եկամուտների ճշտված պլանը սահմանել 25 125.5 հազ. դրամ:

2. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 11.1.2 «Պահուստային ֆոնդ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «4891 – պահուստային միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը ավելացնել 177.4 հազ. դրամով, 4891 հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 1 450.5 հազ. դրամ:

2015թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասի ճշտված պլանը սահմանել 25 125.5 հազ. դրամ

3. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 11.1.2. « Պահուստային ֆոնդ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «4891 – պահուստային միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 1025.0 հազ. դրամով, կատարել հատկացում համայնքի ֆոնդային բյուջեին: 4891 հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 425.5 հազ. դրամ:

2015թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասի ճշտված պլանը սահմանել 24 100.5 հազ. դրամ

4 Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 08.6.1. «Հանգիստ մշակույթ և կրոն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «5112-շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը սահմանել 800 հազ. դրամ:

5 Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 06.4.1. «Արտաքին լուսավորություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «5112-շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը ավելացնել 225 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1215.0 հազ. դրամ: